

**ՀԱՄԵՍԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԳԻՏԱԿԱՐԳԱՅԻՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ**

Սույն հոդվածում քննության է առնվում համեմատությունը որպես տարբեր գիտակարգերի կողմից ուսումնասիրվող առարկա: Համեմատության միջգիտակարգային բնույթը պայմանավորված է նրանով, որ այն օբյեկտիվ իրականության ճանաչման գործընթացի հիմնարար բաղադրիչներից է: Լինելով լեզվի պատկերավոր արտահայտչամիջոց՝ այն արտացոլում է արտալեզվական աշխարհի իրերի նմանության և տարբերության խնդիրը՝ տեղակայվելով օբյեկտիվ իրականության, մտածողության, տրամաբանության, լեզվի հարաբերակցության հարացույցում: Փորձ է արվում ներկայացնել տարբեր գիտակարգերի՝ լեզվաբանության, գրականագիտության, փիլիսոփայության, հոգեբանության անդրադարձները համեմատությանը, ինչպես նաև համեմատության դերը դարձույթ/բանադարձում տարբերակման տիրույթում:

Բանալի քառեր. *համեմատություն, միջգիտակարգային ուսումնասիրություն, բանադարձում, դարձույթ, պատկերավոր արտահայտչամիջոց, արտալեզվական աշխարհ, ասույթի առկայացում, ճանաչողական գործառույթ, ռճական հնարք*

Հայտնի է, որ համեմատությունը մարդու լեզվամտածողության հիմքն է օբյեկտիվ իրականության ճանաչման տիրույթում: Մի կողմից այն տրամաբանական կարգ է՝ օբյեկտիվ իրականության ճանաչման գործընթացի կարևորագույն բաղադրիչ, մյուս կողմից՝ լեզվական երևույթ, քանի որ մտածողությունն անքակտելիորեն կապված է լեզվի հետ և լեզվից դուրս գոյություն չունի: Համեմատության միջոցով առկայանում է ասույթի իմաստը և արտահայտվում է խոսքի սուբյեկտի վերաբերմունքը, գնահատականը տեղեկության օբյեկտի նկատմամբ՝ նպաստելով գրուցակցի վրա ներագդելու գործընթացին:

Համեմատությունը ամենալայն իմաստով նաև մշակութաբանական երևույթ է, քանի որ արտացոլում է արտալեզվական աշխարհի իրերի նմանության և տարբերության խնդիրը, ինչը ներհատուկ է մշակութային երևույթների վերլուծական համակարգին: Օբյեկտիվ իրականության, մտածողության, լեզվի հարաբերակցության ուսումնասիրությունը աշխարհի գիտական ճանաչման հիմնախնդիրներից է և իր ուրույն տեղն ունի միջգիտակարգային հետազոտությունների ոլորտում: Համեմատությունն ուսումնասիրվում է ամենատարբեր գիտակարգերի կողմից ինչպիսիք են՝ փիլիսոփայությունը, տրամաբանությունը, լեզվաբանությունը, մշակութաբանությունը, հոգեբանությունը, մաթեմատիկան, նեյրոկիբերնետիկան և այլն:

Համեմատության՝ որպես լեզվահոգեբանական և լեզվատրամաբանական երևույթի ուսումնասիրության պատմությունը սկիզբ է առնում է վաղ ժամանակներից: Որպես լեզվի պատկերավոր արտահայտչամիջոց այն գրե-

թե բոլոր ժամանակաշրջաններում եղել է հետազոտողների ուշադրության կենտրոնում և մանրամասն նկարագրվել է հումանիտար տարբեր գիտությունների կողմից /Guiraud, 1961/:

Համեմատություն եզրի առաջին կիրառությանը հանդիպում ենք 1174թ-ին Սեն-Թոմա դ'Աքենի "De Potentia" աշխատության մեջ "comparison" լատինագիր տարբերակով և հետևյալ իմաստով. «համեմատելու գործողություն, որի նպատակն է վեր հանել նմանություններն ու տարբերությունները»:

Ֆրանսերենում comparaison (համեմատություն) բառը առաջացել է լատիներեն comparatio-ից, որը նշանակում է զուգակցել, միավորել: Լատինական արմատը ստուգաբանելիս ստանում ենք cum նախածանցը, որը նշանակում է միասին, հետ և paro բայը, որը նշանակում է ձեռք բերել, մատակարարել, ապահովել և իր հերթին սերում է par արմատից, որը նշանակում է «հավասար» /Quesemand, 2005: 46/:

"Dictionnaire historique de la langue française"-ում կարդում ենք, որ այդ եզրը փոխառություն է լատիներեն comparatio-ից, որը ամրագրվել է ֆրանսերենում 1174-ին և սկսել է օգտագործվել ոճական բանադարձման իմաստով 1268թ.-ից /Dictionnaire historique de la langue française, 2011: 457/:

Մարդկային մտածողության համար համեմատության չափազանց կարևոր նշանակության մասին առաջին անգամ խոսել է անտիկ շրջանի հույն մեծ փիլիսոփա Արիստոտելը: Վերջինիս կարծիքով, ասելիքի հստակությունը ապահովելու համար հարկավոր է բերել օրինակներ և անել համեմատություններ: Իր «Հռետորական արվեստ»-ի երրորդ գրքում նա տարբերակում է նմանության վրա հիմնված երկու միավորներ՝ "metaphora" և "eikon", որոնք նշագծում են համեմատայալի և համեմատելիի հարաբերությունները: Այսպիսով, կարելի է փաստել, որ համեմատության դասակարգման առաջին փորձերը ի հայտ են գալիս այս աշխատության մեջ: Ֆրանսիացի լեզվաբան Նատալի Պտիբոնի կարծիքով արիստոտելյան eikon եզրը համարժեք է այն բանին, ինչ մենք այսօր անվանում ենք համեմատություն /Petibon, 2011/:

Հարկ է նշել, որ Արիստոտելին է պատկանում այն տեսակետը, համաձայն որի համեմատելու գործողությունը համընդհանուր է աշխարհի ճանաչման և արտացոլման բոլոր փուլերում: Ջարգացնելով այս միտքը՝ նա պնդում է, որ ճանաչողությունը ոչ այլ ինչ է, քան համեմատություն և տալիս է հետևյալ հիմնավորումը. մարդը շրջապատող աշխարհի մասին պատկերացում է կազմում համեմատություններ անելով՝ ինչի շնորհիվ տեսակավորվում է տեղեկությունը և ձևավորվում են աստիճանակարգային կապերի վրա հիմնված դատողություններ, որոնցում էլ միավորվում կամ առանձնացվում են օբյեկտները՝ այլ օբյեկտների համեմատությամբ նմանությունների կամ տարբերությունների հիմքի վրա:

Այդուհանդերձ, այս համատեքստում համեմատությունը դիտարկվում է ոչ թե որպես ինքնուրույն արտահայտչամիջոց, այլ որպես փոխաբերության հետ ունեցած փոխհարաբերության ստորադաս անդամ:

Փոխաբերությունն ու համեմատությունը տարբերակելու համար Արիստոտելը բերում է երկու օրինակ: Մեջբերելով Հոմերոսի խոսքը Աքիլլեսի մասին, նա գտնում է, որ *Il s'elanca comme un lion* (Նա նետվեց ինչպես մի առյուծ) նախադասության հիմքում ընկած է պատկեր և այն համեմատություն է, իսկ *Ce lion s'elanca /Այս առյուծը նետվեց/* նախադասությունը փոխաբերություն է: Ինչպես տեսնում ենք, Արիստոտելի ըմբռնմամբ համեմատությունը և փոխաբերությունը միմյանց շատ մոտ հնարքներ են, և երկուսն էլ պատկերավոր խոսքի մաս են կազմում:

Արիստոտելից հետո, Քվենտիլիանոսը նույնպես անդրադառնում է այդ հարցին իր “*Institution oratoire*” աշխատության մեջ՝ տարբերակելով երկու բանադարձում *comparatio* /համեմատություն/ և *similitude brevior* /փոխաբերություն/ և տարվ հետևյալ մեկնաբանությունը՝ «Երբ ես ասում եմ՝ այսինչ հանգամանքում մարդը գործեց առյուծի նման, ես համեմատում եմ, իսկ երբ ես այդ մարդու մասին խոսելիս ասում եմ, «այս մարդն առյուծ է», ես կատարում եմ փոխաբերական դրափոխություն (*transposition*)»:

Անտիկ աշխարհի փիլիսոփաները փորձել են նաև առանձնացնել համեմատության ճանաչողական գործառույթները: Թվարկենք դրանցից մի քանիսը.

- 1) համեմատության միջոցով ձևավորվում և ճանաչելի են դառնում եզակիի, առանձնահատուկի և համընդհանուրի կարգերը,
- 2) բացահայտվում են երևույթների պատճառահետևանքային կապերը,
- 3) ճանաչելի է դառնում իրերի և երևույթների հարափոփոխությունը և զարգացումը,
- 4) դասակարգվում և կանոնակարգվում են առարկաներն ու երևույթները,
- 5) հիմնավորվում են օբյեկտիվ իրականության ճանաչմանը միտված եզրահանգումները:

Առանձնակի ուշադրության են արժանի համեմատության հոգեբանական մեխանիզմների և առանձնահատկությունների ուսումնասիրությունները: Այսպես, հոգեբան Ե.Կլիմովը ուսումնասիրելով մարդու կողմից արտաքին աշխարհի ճանաչման և խոսքի մեջ դրա արտացոլման մեխանիզմը, առանձնացնում է այդ գործընթացի երեք փուլ՝ համեմատությունը դիտարկելով որպես այդ գործընթացի հիմնարար բաղադրիչ: Ստորև ներկայացնենք այդ փուլերի հակիրճ նկարագիրը.

- ազդանշանների հայտնաբերում - մարդուն շրջապատող քառասյին միջավայրից առարկաների առանձնացում ըստ իրենց հատկանիշների,
- ազդանշանների տարբերակում - առարկաների առանձնացում նմանատիպ այլ առարկաներից,
- ազդանշանների անվանում - առարկաների կարգայնացում և անվանում լեզվական միավորների միջոցով:

Դժվար չէ նկատել, որ այս փուլերի առանձնացման հիմքում ընկած է համեմատության գործոնը, ինչն այն դարձնում է այնպիսի գիտակարգերի

ուսումնասիրության առարկա ինչպիսիք են հոգեբանությունը, փիլիսոփայությունը, լեզվաբանությունը, գրականագիտությունը:

Համեմատության հոգեբանական հիմքի մասին է խոսել նաև Ի. Մ. Սեչենովը: Վերջինիս կարծիքով՝ այն ամենը, ինչ մարդը ընկալում է զգայաբաններով, և այն ամենը, ինչը նրա մտածողական գործունեության արդյունքն է (աշխարհի ամբողջական պատկերից սկսած մինչև կոնկրետ տպավորություններ, առանձին հատկություններ և հատկանիշներ, որոնք վերացարկված են իրականությունից), կարող է մեր գիտակցության մեջ միավորվել ասոցիատիվ ձևով /Сеченов, 1873: 190/: Նրա համոզմամբ՝ համեմատությունը աշխարհի ընկալման ձևերից մեկն է իր բոլոր առանձնահատկություններով հանդերձ, իսկ ճանաչողության գործընթացը հենց համեմատության գործընթաց է և այն ոչ միայն աշխարհի ճանաչման, այլ նաև այդ ճանաչման արդյունքները մշակույթի մեջ ամրագրող միջոց է:

Այսպիսով, հոգեբանության մեջ համեմատությունը դիտարկվում է որպես մտածողական գործընթաց: Այն մտածողության տրամաբանական գործողություններից մեկն է, որը թույլ է տալիս ստանալ լրացուցիչ գիտելիք շրջապատող աշխարհի առարկաների, հատկանիշների և հարաբերությունների վերաբերյալ /Сеченов, 1873/:

Փիլիսոփայության մեջ համեմատությունը դիտարկվում է որպես ճանաչողական գործողություն, որն ընկած է առարկաների նմանությունների և տարբերությունների վերաբերյալ դատողությունների հիմքում: Այն վեր է հանում առարկաների որակական և քանակական բնութագրերը, կարգավորում է դրանք՝ դասակարգելով և գնահատելով կեցության և ճանաչողության բովանդակությունը /Кондаков, 1967: 359/:

Լեզվաբանության մեջ համեմատությունը համարվում է բանադարձում, որի հիմքում ընկած է նմանության հատկանիշի հիման վրա առարկաների համադրումը, այն հասկացություն է հատկանիշի աստիճանի, հավասարության-անհավասարության մասին, որն իր արտահայտությունն է գտնում ինչպես ածականների և մակբայների համեմատության աստիճանների քերականական կարգում, այնպես էլ բառային և դարձվածաբանական մակարդակներում /Barlézizian, 2010: 18/:

Գրականագիտության մեջ համեմատությունը դիտվում է որպես դարձույթի տեսակ, որը փորձում է բացատրել երևույթը կամ գաղափարը այլ երևույթի կամ գաղափարի հետ համադրելու միջոցով: Երբ իմաստն անցնում է մի երևույթից մյուսը, այդ երևույթները չեն կազմում նոր հասկացություններ, այլ պահպանվում են իբրև ինքնուրույն միավորներ: Գրականագիտությունը կարևորում է համեմատության պատկերավոր կողմը, նոր իմաստային լեզվական միավորներ կազմավորելու նրա ունակությունը, ինչպես նաև այն, որ համեմատությունը համադրության իրավիճակ ստեղծելով կարողանում է առկայացնել իր իմաստային համակարգի մի որևէ նոր ասպեկտ՝ այդպիսով կրկնապատկելով լեզվական միավորների իմաստային ներուժը, քանի որ բառույթը իրեն ամրագրված բառարանային նշանակությունից զատ այլ

առարկա նշելու համար ձեռք է բերում հավելյալ իմաստ: Համեմատական կառույցում հանդես գալով նոր նշանակությամբ բառը չի կորցնում իր հիմնական նշանակությունը՝ հակառակ դեպքում չի կարող լինել հասկանալի, ինչը հանգեցնում է նոր իմաստային նրբերանգների և մտքերի արտահայտության նոր միջոցների ստեղծմանը: Այլ կերպ ասած, համեմատությունը ոչ միայն իրականացնում է համեմատվող օբյեկտների որևէ առանձնահատկության զուտ կիրառական գործառույթ այլ նաև նոր իմաստի ստեղծման միջոց է: Նման առանձնահատկության մասին է խոսում Մանդելշտամը «Չրույցներ Դանթեի մասին» աշխատությունում: «Դանթեի համեմատությունները երբեք նկարագրական չեն: Դրանք միշտ հետապնդում են կոնկրետ նպատակ՝ տալ կառուցվածքի ներքին պատկերը» /Мандельштам, 1987: 121/:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ համեմատությունը ընկած է ցանկացած լեզվի պատկերավոր համակարգի հիմքում, նաև նրա միջոցով է իրագործվում լեզվի հիմնական գործառույթներից մեկը՝ տեղեկատվության փոխանցումը: Այն կատարվում է նկարագրության միջոցով, իսկ որևէ անծանոթ բան նկարագրելու համար մենք դիմում ենք այն բանին, ինչը ծանոթ է, այսինքն առարկան կամ երևույթը մմանեցնում ենք այլ առարկայի կամ երևույթի ընդհանուր հատկանիշի հիման վրա: Հետևաբար, կարելի է փաստել, որ լեզվի պատկերավոր համակարգում առկա բոլոր այլ արտահայտչամիջոցները ածանցյալ են համեմատությունից:

Ինչպես նշում է Ա. Պոտեբնյան, «Ճանաչողության գործընթացը հենց համեմատության գործընթացն է» /Потебня, 1926/, և այն իրականացվում է լեզվական միավորների միջոցով: Ցանկացած լեզու՝ այդ թվում նաև հայերենն ու ֆրանսերենը, հարուստ է համեմատական կառույցներով, դրանք լայնորեն գործածվում են ինչպես բանավոր խոսքում, այնպես էլ գեղարվեստական գրավոր խոսքում: Այս կառույցների առատությունը ծնունդ է տվել բազմաթիվ գիտական ուսումնասիրությունների, որոնցում համեմատական կառույցներին առնչվող խնդիրները լուսաբանվել են տարբեր տեսանկյուններից՝ կառուցվածքային, ձևաբանական, բառակազմական, իմաստային, ոճական, շարահյուսական, նշանագիտական, ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան հետազոտողների կողմից:

Այժմ փորձենք հակիրճ անդրադարձ կատարել համեմատության վերաբերյալ որոշ լեզվաբանների կողմից տրված սահմանումներին:

Համեմատությունը հիմնականում ուսումնասիրվում է ոճագիտությանը և հռետորաբանությանը վերաբերող աշխատություններում, որոնցում համեմատության վերլուծությունը տրվում է փոխաբերության վերլուծությանը զուգահեռ՝ տրամաբանական մակարդակում անպայման անդրադարձ կատարելով համեմատության և փոխաբերության փոխհարաբերություններին՝ ցույց տալով այն փուլերը, որոնցով անցնում է համեմատությունը մինչև որպես փոխաբերություն հանդես գալը:

Այսպես, ըստ Ժորժենի համեմատությունը «արտահայտության ամենահին և բնական միջոցն է, որի նպատակն է ներշնչել, օգնել տեսնել կամ հասկանալ» /Georgin, 1981: 143/:

«Ցանկացած փաստարկ համարվում է ոչ լիարժեք, եթե չի դիմում համեմատության օգնությանը: Մի շարք օբյեկտների համադրման ժամանակ միշտ առկա է «չափի» գաղափարը, որը ոչ բացահայտ կերպով ընկած է համեմատական կառույցների հիմքում» /Perelman, Olbrechts-Tyteca, 1960: 636/:

Բուվրոյի մեկնաբանությամբ, «համեմատությունը մտքի բանադարձում է, որի նպատակն է կողք-կողքի դնել երկու նշանակություններ, որոնք ունեն ինչ-որ ընդհանուր բան» /Bouverot, 1969: 719/:

Համեմատությունը հռետորական բանադարձում է, որի գործառույթն է իրար մոտեցնել մարդկային փորձի երկու տարբեր բնագավառներ՝ մեկի միջոցով լուսաբանելով մյուսը և նոր հեռանկարներ բացելով ընթերցողի համար /Lundquist, 1983: 124/:

Ըստ Մ. Ֆուկոյի համեմատությունը «համապարփակ, ակնհայտ և միևնույն ժամանակ ամենաքողարկված՝ բացահայտման ենթակա տարր է, որը որոշիչ դեր է կատարում ճանաչողության ձևի բնորոշման մեջ և որը ապահովում է նրա բովանդակության բազմաշերտությունը» /Фуко, 1994: 66/:

Մեկ այլ բնորոշմամբ, «Համեմատությունը պարզաբանում է գաղափարը, լուսաբանում արտահայտությունը» /Bacry, 1992: 35/:

Ինչպես տեսնում ենք, վերոնշյալ հեղինակները համեմատությունը դիտարկում են որպես հռետորաբանական բանադարձում, այսինքն առաջին պլանն են մղում ներազդեցության գործոնը, այլ կերպ ասած, համեմատությունը կարող է հանդես գալ ոչ միայն որպես մտքի պարզաբանման փաստարկ, այլ նաև համոզման, ներշնչանքի միջոց՝ խոսքին հաղորդելով պատկերավորություն:

Հարկ է նշել, որ ոչ բոլոր լեզվաբաններն են համեմատությունը դիտարկում զուտ հռետորաբանության տեսանկյունից: Այսպես, Բոննարի կարծիքով, չնայած «համեմատությունը հաճախ վերագրում են հռետորաբանությանը, իրականում խոսքը վերաբերում է իմաստային բանադարձմանը, որին խորթ են լեզվի պատահական զուգորդումները» /Bonnard, 1981: 74/:

Այսինքն, համեմատությունը չի փոխում համեմատվող երևույթների անվանումների իմաստը, որով և տարբերվում է փոխաբերությունից: Այստեղ ևս, կրկին առաջ է գալիս համեմատության և փոխաբերության սահմանազատման դժվարությունը:

Այս խնդրի համակողմանի ուսումնասիրության համար կարևոր է դառնում նաև այն հարցը, թե որ եզրն է համարվում համեմատության համար բնութագրական՝ բանադարձումը թե դարձույթը: Ավանդաբար համեմատությունը դիտարկվում է որպես բանադարձում, այլ ոչ թե դարձույթ: Ինչպես հայտնի է, ոճագիտության մեջ դարձույթ է համարվում այն լեզվամիավորը, որը հիմնվում է բառի իմաստի փոփոխության վրա: Հունարեն *tropos* /դարձույթ/ բառը նշանակում է «այն, ինչ շրջվում է», այսինքն «այն, ինչ փոխում է ինչպես ուղղությունը, այնպես էլ իմաստը» /Bacry, 1992: 9/:

Դարձույթների տիպական օրինակներ են փոխաբերությունը և փոխանունությունը, որոնք ակնհայտորեն արտացոլում են իմաստային փոխակերպումը: Համեմատությունն դարձույթ չէ, քանի որ այն նախանշում է իմաստային մերձեցման սահմաններ համապատասխան կառույցների տեսքով /comme, pareil/, ի տարբերություն փոխաբերության բաղադրիչ հանդիսացող լեզվական միավորների, որոնց միջոցով իրականանում է իմաստափոխությունը:

Ինչպես նշում է Ռոբրիյոն, «համեմատությունը բանադարձում է, այլ ոչ դարձույթ, քանի որ համատեքստում բացահայտ ձևով արտացոլված է նմանության հարաբերությունը» /Robrieux, 1993: 44/:

Որոշ լեզվաբաններ էլ փորձում են համեմատությունը դասել դարձույթների շարքին, ինչի պատճառով էլ նրանց առաջադրած դրույթներն ու մեկնաբանությունները հայտնվում են բուռն քննարկումների և քննադատությունների կիզակետում: Հայտնվում է նաև այն տեսակետը, որ համեմատության մեջ բառիմաստները փոփոխության չեն ենթարկվում, կամ էլ տեղի է ունենում իմաստի սերտաճում, ինչի հետևանքով էլ պատկերավոր համեմատությունը դառնում է ինքնուրույն իմաստային միավոր: Ինչպես նշում է Ի. Գոլյուբը, համեմատության միայն այդօրինակ ընկալման դեպքում է հնարավոր համեմատությունը վերագրել դարձույթների դասին՝ ելնելով դարձույթ եզրի բուն իմաստից: Նա տալիս է դարձույթի հետևյալ սահմանումը. «բառեր, որոնք գործածվում են փոխաբերական իմաստով պատկեր ստանալու նպատակով», իսկ ինչ վերաբերում համեմատությանը, ապա նրա կարծիքով այն «մի առարկայի համադրումն է մյուսի հետ, որի նպատակն է առաջինի գեղարվեստական նկարագրությունը» /Голуб, 2001: 19, 130, 141/:

Ի. Արնոլդը որպես դարձույթ է դիտարկում լեզվական այն պատկերավոր արտահայտչամիջոցները, որոնցում բառը կամ բառակապակցությունը գործածվում է փոխակերպված իմաստով /Арнольд, 1990: 82/: Տոմաշևսկու մեկնաբանությամբ դարձույթները «ավելի հակիրճ ձևով արտահայտում են այն, ինչ ավելի բարդ ձևով արտահայտում են մակդիրներն ու համեմատությունները» /Томашевский, 1996: 220/:

19-րդ դարի ֆրանսիացի լեզվաբան Ֆոնտանիեն փոխաբերությունը դասում է դարձույթների շարքին, իսկ համեմատությունը համարում է ոչ դարձույթ է /non trope/: Այս մոտեցման դեպքում էականն այն է, որ համեմատության մեջ համեմատայալը և համեմատելին լինեն «հեշտ նշմարելի» /Fontanier, 1827: 21/:

Բենը բանադարձում է անվանում «արտահայտվելու սովորական ձևից շեղումը, որի նպատակն է սաստկացնել տպավորությունը», իսկ դարձույթը «բառի բուն իմաստի փոխարինումն է բառին ոչ հատուկ իմաստով /օրինակ՝ կտրուկ խոսք, կտրուկ շարժում» /Бэн, 1886: 8/:

Խնդրո առարկա երևույթի վերաբերյալ մոտեցումների նման բազմազանությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ համեմատության լեզվահոգեբանական մեխանիզմը ինքնին շատ բարդ է և բազմակողմանի,

ինչն էլ իր հերթին առաջացնում է դարձույթների և բանադարձումների հստակ սահմանագատման դժվարություններ:

Այս ուսումնասիրություններին հետևեցին բազմաթիվ այլ աշխատություններ, որոնցում հեղինակները չէին սահմանափակվում վերոնշյալ դիտարկումներին սուկ անդրադարձով, այլ փորձում էին ընդլայնել քննարկվող խնդրի հետազոտության տիրույթները և դիտարկել այն տարբեր տեսանկյուններից ջանալով քիչ թե շատ հստակեցնել խնդրի շուրջ ստեղծված իրավիճակը:

Նման մոտեցումը հանգեցրեց նրան, որ գեղարվեստական լեզվի ուսումնասիրության համատեքստում 20-րդ դարի 60-70-ական թվականներին ձևավորվեց համեմատական կառույցների ուսումնասիրության մի ողջ տեսություն: Այդ տեսության ուսումնասիրության առարկա համեմատությունը սկսեց հանդես գալ որպես հետազոտական ինքնուրույն օբյեկտ, որը արտահայտում է ոչ միայն հեղինակի զգացմունքները և գնահատականները, այլև հանդես է գալիս որպես ընթերցողին ուղղված ուրույն ազդանշան: Համեմատությունը հուզական ազդեցություն է գործում ընթերցողի վրա: Հատկապես տպավորիչ են առարկաների անսպասելի և հեռավոր համադրությունները: Անսպասելի պատկերն ավելի ցայտուն է և օժտված է համոզելու գործառույթ իրականացնելու մեծ ներուժով: Այսպիսի համեմատություններում այն, ինչը վաղուց հայտնի է, ներկայանում է փոխակերպված և վերագիտակցված ձևով՝ ներագոյնան միջոցով փոխանցելով համապատասխան տրամադրություն և հույզ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Bacry P. Les Figures de style et autres procédés stylistiques. Paris, 1992.
2. Barlézizian A. Stylistique du français moderne (figures et tropes). Erévan: Lingua, 2010.
3. Bonnard H. Code du français courant. Magnard, 1981.
4. Bouverot D. Comparaison et métaphore // *Le français moderne - Revue de linguistique française*, 1969.
5. Guiraud P. Les locutions françaises. Paris, 1961.
6. Fontanier P. Des Figures du discours autres que les tropes. Paris: Maire-Nyon, 1827.
7. Lundquist L. L'Analyse textuelle. Paris: CEDIC, 1983.
8. Perelman Ch., Olbrechts-Tyteca L. La nouvelle rhétorique // *Revue philosophique de Louvain*, 1960.
9. Petibon N. La Figure de la comparaison dans les œuvres de Gustave Flaubert et de Robert Musil, ou le paradigme ironico-poétique. Strasbourg, 2011.
10. Quesemand A. Figures et tournures de la langue française. Paris, 2005.
11. Robrieux J. Eléments de rhétorique et d'argumentation. Paris, 1993.

12. Арнольд И. В. Стилистика современного английского языка. М.: Просвещение, 1990.
13. Бэн А. Стилистика и теория устной и письменной речи. М., 2011.
14. Голуб И. Б. Стилистика русского языка. М., 1997.
15. Кондаков Н. Введение в логику. М.: Наука, 1967.
16. Сеченов И. Психологические этюды. М., 1873.
17. Томашевский Б. Теория литературы. Поэтика. М., 1996.
18. Фуко М. Слова и вещи. Санкт-Петербург: А-сad, 1994.
19. Dictionnaire historique de la langue française, le Robert, 2011.

Л. КАРАПЕТЯН – Сравнение как предмет междисциплинарного исследования. – В данной статье рассматривается сравнение как предмет изучения различных дисциплин. Междисциплинарная природа сравнения обусловлена тем, что оно является одним из базисных компонентов процесса познания объективной реальности. Являясь изобразительным языковым средством, сравнение отражает проблему сходства и различия явлений внеязыковой действительности, располагаясь в парадигме соотношения объективной реальности, мышления, логики и языка. Делается попытка представить подходы различных дисциплин – лингвистики, литературоведения, философии, психологии – к сравнению, а также роль сравнения в плоскости различения фигуры и тропа.

Ключевые слова: сравнение, междисциплинарный подход, троп, фигура, изобразительное средство, внеязыковая действительность, актуализация высказывания, когнитивная функция, стилистический прием

L. KARAPETYAN – Simile as a Subject of Interdisciplinary Research. – The paper discusses the interdisciplinary nature of simile as the focal components of cognition. Simile as a figurative expressive means in language reflects the similarities and differences of the extralinguistic realia in the paradigm of objective reality, thinking, logic and language. An attempt is made to present simile within the framework of different disciplines, such as linguistics, literary criticism, philosophy and psychology, as well as to discuss its role in the realm of tropes and figures of speech.

Key words: simile, interdisciplinary research, trope, figure of speech, figurative means of expression, extralinguistic realia, actualization of utterance, cognitive function, stylistic device